Անհատական աշխատանքի ընթացքում ծնողները ներկայացրել են ընտանիքում առկա հոգեբանական, ֆինանսական խնդիրները:
Զրույցի ընթացքում ծնողներին ներկայացվել է կենտրոնում տրամադրվող ծառայությունները, ներկայացվել է կենտրոն հաճախման օրերը և գրաֆիկը: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է անհատական խորհրդատվություն կապված շահառուների՝
- վարքային դրսևորումների կարգավորմանը
- շփման ոլորտի կարգավորմանը
- կոնֆլիկտայնության նվազեցմանը
- ծնող-երեխա հարաբերությունների կարգավորմանը
- երեխայի մոտ խոհանոցից սննվելու սննդային սահմանափակումներին:

<u>**Երեխայի անհատական քարտի լրացում**</u>: Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի հոգեբանը իրականցերլ է **4** երեխայի, որից 3 տղա 1աղջիկ անհատական հոգեբանական քարտի լրացում: Վեր է հանվել երեխաների իմացական և ճանաչողական ոլորտները: Բացահայտվել է երեխայի ուժեղ և թույլ կողմերը, վարքը, շփումը միջավայրում և մի շարք առանձնահատկություններ՝ հուզակամային ոլորտ, վարքային պատճառներ և հետևանքներ:

<u>**Հոգեբանական աշխատանքի թերթիկ**</u> լրացվել է **10** մայրեի հետ, որի նպատակն էր ծնողների հետ համատեղ պարզել երեխայի մոտ եղած հոգեբանական խնդիրները, ինչ ընթացքով աշխատանքը պետք է ընթանա» Թերթիկում նաև նշվում է հետագա արդյունքը:

<u>**Անհատական հոգեբանական խորհրդատվություն**</u> իրականացվել է **49 երեխաների** հետ, որից **31** տղա, **18** աղջիկ:
Աշխատանքները ուղղված են եղել այն երեխաներին, ովքեր ունեն հուզական, հոգեխոսքային, նյարդային գերակտիվություն, վարքային դրսևորումներով են օժտված, որոնք չեն համապատասխանում տարիքային զարգացմանը:
Նպատակը հետևյալն էր անհատական աշխատանքի լիարժեք պայմաններ ստեղծել անձը զարգացնելու, թերապիաների միջոցով օգնել հասկանալ իրենց անհատական առանձնահատկությունները, խնդիրները, պատճառները, խանգարող հանգամանքները, սեռատարիքը, որը երեխան գտնվում է ճգնաժամային վիճակում, որի համար անհրաժեշտ են մի քանի պայմաններ՝ շտկողական, զարգացնող, ուսուցանող:

Հոգեբանը աշխատանք է իրակացրել երեխաների հետ որոնք ունեցել են հուզակամային ոլորտի խանգարում, վախեր, վարքային դրսևորումներ: Իրականացվել է արտ-թերապիա՝ երաժշտաթերապիա, ավազաթերապիա, հեքիաթերապիա: Այն ունեցել է իր արդյունավետությունը, բնականոն ընթացքը, դրական հանգուցալուծումներ: Հեքիաթների միջոցով ստեղծվել է խաղաղ մթնոլորտ:

<u>**Անհատական հոգեբանական խորհրդատվություն ծնողների, ընտանիքի անդամների հետ:**</u>
Անհատական հոգեբանական խորհրդատվություն իրականացվել է **30 ընտանիքի** հետ, որից **29** մայր, **1** տատ:
Անհատական հոգեբանական խորհրդատվություն իրականացվել է ծնողների հետ, ովքեր անհանգստանում էին երեխաների նյարդային, ագրեսիվ, հուզական վիճակից:
Աշխատանքի ընթացքում տրվել է հոգեբանական աջակցություն, խորհրդատվություն և մեթոդներ: Ծնողներին ցուցվել է հոգեբանի հետ զուգահեռ ցուցաբերել հետևողականություն երեխաների նկատմամբ, հարգալից վերաբերմունք և սեր ու գուրգուրանք տալ երեխաներին:

Ընտանիքի անդամների հետ աշխատանքը տարվել է հետևյալ խնդրի ուղղությամբ. անհաշտություն, որը լուրջ խնդիր էր և երեխաների և ծնողների համար: Աշխատանքը ունեցել է դրական արդյունք, արդյունքում ընտանիքը ապրում է մի հարկի տակ:
Ըստ կենտրոնի հոգեբանի դիտարկան շահառու ընտանիքների խնդիրները տարբեր են, որոնց վեր հանման նպատակով վերջինս իրականացվել է հետազոտություն և տվյալների հավաքագրում: Ըստ հեգեբան՝ ծնողների անհանգստությունը ընթանում է մի քանի ոլորտներով՝ իմացական, հուզակամային, շփման և հաղորդակցման և վարքային:
Ծնողների հետ անահատական աշխատանքների ընթացքում տրվել է խորհրդատվություն, մեթոդներ երեխաների հետ աշխատելու և նրանց աջակցելու հարցում:

Աշխատանք է իրականացվել այն ծնողների հետ, ովքեր ունեն հոգեխոսքային զարգացման և աուտիստիկ համախտանիշով երեխաներ, որոնց գործընթացը ավելի բարդ է և առանձնահատուկ, թույլ է զարգացած նրանց իմացական, ճանաչողական և սոցիալական ոլորտները, որոնք չեն համապատասխանումիրենց տարիքային առանձնահատկություններին, չեն ենթարկվում վարքային նորմերին և կանոններին: Ծնողներին խորհուրդ է տրվել լինել համբերատար և հետևողական ձևավորել հուզական կոնտակտ և ձեռք բերել երե

<u>**Սոցիալ-հոգեբանական համալիր խորհրդատվություն:**</u> Աշխատանքը իրականացվել է երկու մասնագետի կողմից , քննարկվել է խնդիրների պատճառները, խանգարող հանգամանքները, տրվել են լուծումներ հանդիպումների և տնայցի միջոցով:
Սոցիալ-հոգեբանական համալիր խորհրդատվություն է իրականացվել **75** ընտանիքի անդամների հետ, որից **64** մայր, **5** հայր, **5** տատ, **1** քույր:

<u>**Խմբային աշխատանքներ թիրախ խմբերի հետ**</u> իրականացվել են կենտրոնի մասնագիտական թիմի կողմից: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ 7 խմբերը.

<u>**1. Սոցիալ-հոգեբանական կարողությունների և կյանքի հիմնարար հմտությունների զարգացման խումբ:**</u>
Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի սոցիալական աշխատողները և հոգեբանը աշխատել են են **4** թիրախ խմբերի հետ, որի շրջանակներում իրականացրել են կյանքի հիմնարար հմտությունների զարգացմանը ուղղված խմբային աշխատանքներ:
Կյանքի հիմնարար հմտությունների զարգացման խմբում երեխաները ուսուցանվում են **16** թեմա և յուրաքանչյուր եռամսյակից հետո խմբերը փոփոխվում են: Յուրաքանչյուր մասնագետ տվյալ խմբի հետ իրականացնում է 4 թեմայի վերաբերյալ հանդիպումներ:
Հաշվետու ժամանակահատվածում **կյանքի հիմնարար հմտությունների զարգացման** խմբերում ընդհանուր ներգրավված է եղել **41** երեխա:

☐ <u>*Կյանքի հիմնարար հմտությունների զարգացման թիրախ խումբ 2-ը վարել է կենտրոնի սոցիալական աշխատող Լ. Շահբազյանը:*</u>

Խմբում ներառվել են եղել **11** շահառու երխա՝ **3** աղջիկ, **8** տղա:
Հաշվետու ժամանակահատվածում շարունակել են աշխատանքները 2-րդ թիրախ խմբի հետ: Իրականացել են թվով 7 հանդիպում: Ուսումնասիրել են հետևյալ **թեմաները՝**
- Հուզական ոլորտի կարգավորում/ 3 հանդիպում
- Ապրումակցում/2 հանդիպում

Վերջին 2 հանդիպումների ընթացքում իրականացրել են խմբային աշխատանքների ամփոփում: Հուզական ոլորտի կարգավորումը թեմայով հանդիպում: <<Հույզերի կախարդական աշխարհ>> սեղանի խաղի միջոցով մասնակիցները ծանոթացել են հույզերի տեսակներին, իրականացրել են տվյալ հույզին բնորոշ դերային խաղ, այնուհետև տարբերակել են դրական և բացասական հույզերը: Իրականացրել են <<Հույզերի անձրևանոց>> մեթոդիկան, որը նպաստել է մասնակիցների հույզերի կարգավորման կարողությունների զարգացմանը: Վարժության ընթացքում մասնակիցները պատկերել են անձրևանոց, ամպեր, անձրև, այնուհետև ամպերի մեջ գրի են առել տարբեր հույզեր՝ և դրական, և բացասական, այնուհետև պատկերացրել, որ անձրևանոցը պետք է պաշտպանի իրենց բացասական հույզերից, անձրևանոցը պետք է իր մեջ ներառի խորհուրդներ, որոնք կօգնեն հաղթահարել բացասկան հույզերը: Թեմայի շրջանակներում իրականացրել են վարժանք, որի ընթացքում մասնակիցները պատկերել են ուրախ և տխուր մարդկանց, այնուհետև դուրս հանել ուրախության և տխրության հույզերի պատճառները, ապրումակցել դիմացինին: Իրականացրել են դերային խաղ, մասնակիցներին տրամադրվել է նախապես պատրաստված հույզերի քարտեր, որոնք առանց խոսքի, դեմքի արտահայտությամբ ներկայացրել են խմբին, իսկ խումբը գուշակել է հույզը: տեղի է ունեցել հույզերի գուշակման վերաբերյալ մուլտֆիլմի դիտում և քննարկում: Հուզական ոլորտի կարգավորում թեմայի շրջանակներում իրականացրել են նաև <<Հույզերի անիվի պատրաստում>>: Իրականացրել են <<Սմայլիշ>> սեղանի թիմային ինտելեկտուալ խաղը, որի ընթացքում իրավիճակները ներկայացրել են էմոջիների միջոցով: <<Հույզերի կառավարում>> թեմայի շրջանակներում իրականացրել են նաև <<EQ էմոցիոնալ ինտելեկտ>> խաղը, որի նպատակն էր ճանաչել այլ խաղացողների էմոցիաները և արտահայտել քոնը: Հանդիպումների արդյունքում մասնակիցները տարբերակել են հույզերը, կարողացել են հասկանալ դիմացինի հույզերը, տեղի է ունեցել հուզական ոլորտի կարգավորման կարողությունների զարգացում:

<<Ապրումակցում>> թեմայի շրջանակներում տեղի է ունեցել ֆիլմի դիտում և քննարկում, այնուհետև մասնակիցները պատկերել են <<Ուրախ>> և <<Տխուր>> մարդիկ՝ իրենց պատկերացմամբ: Քննարկում է ծավալվել, թե ինչպես են հասկանում մարդը ուրախ է, թե, տխուր, արժևորվել են ապրումակցման գաղափարը: Այնուհետև իրականացրել են <<կետիկներ>> վարժանքը, որի միջոցով մասնակիցները գիտակցել են, թե ինչ է խտրականությունը և ինչքան կարևոր է ապրումակցել, հասկանալ դիմացինին: Իրականացրել են նաև <<Հարաբերություններ>> վարժանքը: Հանդիպման արդյունքում մասնակիցները գիտակցել են, թե ինչ է խտրականությունը և զգացել, ապրումակցել խտրականության ենթարկված մարդուն, Հասկացել են, որ խտրականությունն ու անարդարությունը կասեցնելու լավագույն միջոցը այն չհանդուրժելն է:

Վերջին հանդիպման ընթացքում տեղի է ունեցել խմբային աշխատանքների ամփոփում, համագործակցային հմտությունների զարգացում: Իրականացրել են <<Դրական հույզերի փոխանցում>>, <<Ես խմբի կարևոր մասն եմ, խճանկարի ստեղծում>> խաղ վարժանքները: Այնուհետև քննարկել և վերհիշել են ինչպիսի թեմաներ են ուսումնասիրել, սովորել միասին:

Իրականացրել են հարցաթերթի լրացում 3 ամսվա ընթացքում կատարված աշխատանքների գնահատում: Խմբային աշխատանքները ամփոփել են՝ <<Դրական վարքի ամրապնդում>>, <<Լավագույն խորհուրդը>> վարժանքներով:

**Իրականացվեն են հետևյալ մեթոդները և վարժանքները՝**

- Դերային խաղ
- Մուլտֆիլմի դիտում-քննարկում
- Հույզերի անիվի պատրաստում
- Սեղանի ինտելեկտուալ խաղեր

- Հույզերի անծրևանոց
- Մտագրոհ
- Խմբային աշխատանք
- Հարց ու պատասխան
- Դրական հույզերի փոխանցում
- Ես խմբի կարևոր մասն եմ, խճանկարի ստեղծում
- Դրական վարքի ամրապնդ
- Լավագույն խորհուրդը

☐ *Կյանքի հիմնարար հմտությունների զարգացման թիրախ խմբի հետ աշխատանք է իրականացրել կենտրոնի սոցիալական աշխատող Տ. Դաբաղյանը:*

Հաշվետու ժամանակահատվածում 2-րդ թիրախ խմբում իրականացվել է **6** հանդիպում, որին մասնակցել է **11** երեխա, որից **6** աղջիկ, **5** տղա:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է թվով 6 հանդիպում հետևյալ թեմաների շուրջ՝

- Կոնֆլիկտի, վեճերի կարգավորում
- Որոշումների կայացում
- ֆինանսական գրագիտություն

Կոնֆլիկտի, վեճերի կարգավորում թեման իրականացվել է 2 հանդիպման ընթացքում:

1-ին խմբային աշխատանքի ընթացքում շահառուներին տրվել է <<կոնֆլիկտ>> բառի սահմանումը, տրվել է ընդանուր նկարագիր, խոսվել է կոնֆլիկտի 3 կառուցվածայքային տարրերից՝

- Կոնֆլիկտի օբյեկտը
- Կոնֆլիկտի մասնակիցները
- Միջադեպը

Քննարկվել է կոնֆլիկտի առաջացման պատճառները, ներկայացվել է կոնֆլիկտի 2 տեսակները՝ ներքին և արտաքին բերվել են օրինակներ:

Երկրորդ հանդիպման ընթացքում երեխաները լրացրել են թեստ, որի շնորհիվ երեխաները պարզել են, թե կոնֆլիկտային իրավիճակում իրենք որ վարքային ռազմավարությունն են առավել հակված կիրառել: Հանդիպման ավարտին ամփոփվել է թեման:

Որոշումների կայացման թեման անցկացվել է 2 հանդիպումով, առաջին հանդիպման ընթացքում իրականցվել է <<անավարտ նախադասությունների>> մեթոդը, որտեղ երեխաները զույգերով պատասխանել են հարցերին, իրականացվել է խմբային քննարկում: Ներկայացվել է PAUSE մեթոդիկան: Երկրորդ հանդիպման ընթացքում, կիրառելով PAUSE մեթոդի քայլերը, փորձեցին խնդիրները լուծել և համատեղ որոշումներ կայացնել:

5-րդ հանդիպումը իրականացվել է ֆինանսական գրագիտություն թեմայով:

Հանդիպման ընթացքում երեխաները ձեռք են բերել տարրական գիտելիքներ ֆինանսական ոլորտում: Ֆինանսական գրագիտությունը ներառում է ծանոթությունն այնպիսի ֆինանսական կարևորագույն հմտություններին, ինչպիսիք են ֆինանսների հիմունքներ, բյուջեի կազմում, արժույթների իմացություն և այլն: Աշխատանքի ընթացքում պրակտիկ խմբային վարժանքների միջոցով երեխաները ամրապնդել են գիտելիքները ֆինանսական ոլորտում:

6-րդ Հանդիպման ընթացքում տեղի է ունեցել իրականացված թեմաների ամփոփում: Երեխաների հետ իրականացվել է ամփոփիչ վիկտորինա:

Իրականացվել են հետևյալ մեթոդները և վարժանքներ:

- Դերային խաղ <<Հաղթանակ, պարտություն>>:
- PAUSE
- Սեղանի խաղ<<ֆինանսական լոտո>>

- Խմբային քննարկում
- Մտագրոհ
- Թեստի լրացում
- ընթերցանություն
- Անավարտ նախադասություններ

☐ *Կյանքի հիմնարար հմտությունների զարգացման 2 թիրախ խմբերի հետ աշխատանք է իրականցերել կենտրոնի սոցիալական աշխատող Ն. Գևորգյանը:*

Նախորդ եռամսյակում իրականացված աշխատանքը շարունակվել է նույն 2-րդ խմբի հետ:

2-րդ թիրախ խմբում ներառվել են **10** երեխա, որից **8** տղա, **2** աղջիկ:

Հաշվետու ժամանակահատվածում իրականցվել է 4 խմբային հանդիպում, որի ժամանակ քննարկվել են հետևյալ թեմաները՝

- Առաջնորդության ընդհանուր բնութագիրը
- լսելու հմտություններ
- սթրեսի կառավարում

ժամանակի կառավարում

1-ին հանդիպման ընթացքում իրականացվել է խմբային աշխատանք առաջնորդության վերաբերյալ: Հանդիպման նպատակն էր շահառուների մոտ զարգացնել առաջնորդական հմտությունները: Աշխատանքի ընթացքում իրականացվեց թեմատիկ քննարկում, քննարկեց առաջնորդության ընդհանուր բնութագիրը: Մարդուկը մեթոդի օգնությամբ երեխաներին ներկայացվեց առաջնորդության 3 տեսակները՝ գործնական, տեղեկատվական և հուզական, քննարկվեց օրինակներ:

Հանդիպման ընթացքում կիրառվել են հետևյալ վարժանքները՝

- Ինչպես վարվել
- Ձնագնդի
- Տիեզերական վերաբնակներ

Խմբային աշխատանքը և թեմատիկ վարժանքերը նպաստեցեցին շահառուների մոտ՝ առաջնորդական հմտությունների, միմյանց կարծիքը հաշվի առնելու, կարևորը երկորդականից տարբերակելու, խմբով համատեղ որոշում կայացնելու և եզրահանգումներ անելու հմտությունների զարգացմանը:

Հանդիպման թեման էր լսելու հմտությունները:

2-րդ հանդիպման նպատակն էր շահառուներին օգնել գիտակցել լսելու հմտության կարևորությունը: Հանդիպման ընթացքում իրականացվեց թեմայի ներկայացում քննարկվեց ակտիվ լսելու 5 գլխավոր քայլերը, բերվեցին քայլերին վերաբերվող օրինակներ: Խմբային աշխատանքի ընթացքում Ներկայացվեց ակտիվ լսելու 3 ձևերը՝ Դադար, ճշտում, վերապատումում:

Իրականացվեց խաղ-վարժանք <<լսիր, վերարտադիր>> անվամամբ:

Հանդիպումը նպաստեց շահառուների մոտ ակտիվ լսելու հմտության զարգացմանը, որը օգնում է դիմացիանին հասկանալ :

3-րդ հանդիպման թեման էր սթրեսի կառավարումը: Խմբային աշխատանքի ընթացքում շահառուներին տրվեց սթրես բառի սահմանումը, քննարկվեց սրեսի առացման ուղղիները, ներկայացվեց սթրեսի հաղթահարման ուղղիները:

4-րդ հանդիպման թեման ՝ ժամանակի կառավումն էր: Զրույցի ընթացքում մտագրոհ մեթոդի օգնությամբ քննարկվեց <<ժամանակ>> և <<կառավարում>> բառերի նշակւնությունը, շահառուներին ներկայացվեց արդյունավետ ժամանակի կառավարման տեխնիկաները:

- *Կյանքի հիմնարար հմտությունների զարգացման 1 թիրախ խմբերի հետ աշխատանք է իրականցերել կենտրոնի հոգեբան Ա. Հակոբյանը:*

Նախորդ եռամսյակում իրականացված աշխատանքը շարունակվել է նույն 2-րդ խմբի հետ: Խմբում ներառվել է **9** երեխա, որից **4** տղա, **5** աղջիկ:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է թվով 3 հանդիպում.

1-ին հանդիպման թեման ՝ աշխատունակության հմտություններ:Իիրականացվել է թվով երկու հանդիպում, որի նպատակն էր երեխաները իմանան իրենց անելիքները և օրը բաժանեն հատվածների, <<ուզում եմ, պետք է անեմ>>, որոնց միջովով տարբերակեցին պարտադիրը ցանկալիից: Թեմայի ավարտին տեղի ունեցավ քննարկում և ամփոփում:

2-րդ հանդիպման թեման՝ Դիմակայունություն: Իանդիպման նպատակը եղել է խնդիրների դեպքում պետք է անձը կարողնանա ռացիոնալ վերլուծի, էլնելով կարողություններից, հաղթահարի դժվարությունները, որոնք երբեմն դառնում են անկառավարելի և հուսահատված: Թեման նպաստեց, երեխաների մոտ գիտակցական մակարդակի բարձրացմանը, որ խնդիրները ունեն իրենց լուծման ուղղությունները, հույսերի և իրավիճակների տերը լինելու զգացողություններ: Թեմսայի ավարտին տեղի է ունեցել քննարկում և ամփթփում:

<u>**2. Սոցիալական հմտությունների զարգացման խումբը**</u> իրականացվել է կենտրոնի սոցիալական աշխատողի և հոգեբանի կողմից: Սոցիալական հմտությունների զարգացման խմբի հիմնական նպատակն է զարգացնել շահառուների սոցիալական հմտությունները: Խումբը բաղկացած է **10** երեխայից, որից **5** աղջիկ, **5** տղա:

Հաշվետու ժամանակատվածում իրականացվել է 2 խմբային աշխատանք և 1 ֆիլմի դիտում հետևյալ թեմաներով՝

- Ընկերասիրություն
- Ֆիլմի դիտում ուղղված կրթության արժորմանը
- Համակարգչային կախվածությամբ ուղղեկցվող հոգեբանական զարգացման խնդիրները

1-ին հանդիպման սկզբում իրականացվել է մտագրոհ մեթոդը, որի ընթացքում շահառուները ներկայացրել են ինչ են հասկանում ընկերասիրություն ասելով, շեշտադրելով ինչպիսի ընկերներ են իրենք իրական կյանքում: Քննարկվել է թե ինչպիսի ընկերներ կուզենային ունենալ, ով է իրենց համար իրական ընկերը: Հանդիպման ընթացքում իրականացվել է նաև առակների ընթերցում և քննարկում:

2-րդ հանդիպման ընթացքում իրականացվել է ֆիլմի դիտում <<Մեկ օր դպրոցում>> անվամբ, որտեղ ներկայացվում է որ կրթության միջոցով մարդիկ կարող են հաղթահարել ցանկացած տեսակի դժվարություն:

Հանդիպմումը նպաստեց երեխաների մոտ գիտակցական մարդակի բարձրացմանը ուղղված կրթության կարևորությանը և արժորմանը:

3-րդ հանդիպման թեման էր՝ Համակարգչային կախվածությամբ ուղղեկցվող հոգեբանական զարգացման խնդիրները, հանդիպման նպատակն էր, որ երեխան պատկերացում ունենա համակարգչից առաջացած խնդիրներից և վտանգներից: Հանդիպման ընթացքում տեղի ունեցավ զրույց-քննարկում համարգչային կախվածության հետևանքով դրսևորված

հոգեբանական և խոսքի զարգացման խանգարումներով պայմանավորված՝ սահմանափակ բառապաշար ունենալը, թույլ արտահայտվածությունը, տեղաշարժողական կոորդինացիայի խանգարումը, շաբլոնային մտածողությունը, կանոնների ընկալման թույլ արտահայտվածություն:
Արդյունքում երեխաները տեղեկացան առաջացած խնդիրներին, դերային խաղի միջոցով ցույց տվեցին թե ինչպիսի հետևանքեր կարող են առաջանալ համակարգչային չարաշահումից:

**3. Մեդիագրագիտության խումբ:** Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի սոցիալական աշխատողի կողմից իրականացվել են խմբային աշխատանքներ մեդիագրագիտության խմբի հետ, որին մասնակցել է 5 աղջիկ:
Հաշվետու ժամանակահատվածում իրականացրել է խմբային աշխատանքներ մեդիագրագիտության խմբի հետ, որին մասնակցել է 5 աղջիկ: Ընդհանուր հաշվետու ժամանակահատվածում իրականացրել է 6 հանդիպում:
Հանդիպումները իրականացրել են հետևյալ թեմաներով՝
- Տպագիր մեդիա
- Canva/ գրաֆիկ դիզայն

Կիրառվել են հետևյալ մեթոդները՝
- Խմբային աշխատանք
- տեսասահիկների ներկայացում, պատրաստում
- տեսահոլովակների դիտում քննարկում
- իրավիճակների քննարկում
- հարց ու պատասխան
- խաղերի պատրաստում
- հասակակիցները հասակակիցների համար
- փազլինգ

Հաշվետու ժամանակահատվածում տեղի է ունեցել <<Տպագիր մեդիա>> թեմայի ամփոփում: Մասնակիցները իրենք են նյութը ներկայացրել միմյանց, իրականացրել տարաբնույթ վարժանքներ:
Հաշվետու ժամանակահատվածում խմբի կողմից իրականացվել է <<Սերունդների երկոսությունը>> խորագիրը կրող արշավ, որի ընթացքում տարեցների համար կազմակերպել են խաղ՝ երեխաները և տարեցները միասին փազլների միջոցով պատկերել տեխնիկայի զարգացման փուլերը:
Հաշվետու ժամանակահատվածում մասնակիցները ծանոթացել են նաև Canva էլեկտրոնային հարթակին, գրանցվել, բացել իրենց անձնական հաշիվը, ստեղծել թերթոններ, սահիկաշարեր դպրոցներում ուսուցանվող նյութերի վերաբերյալ հավելյալ տեղեկատվություն դուրս բերելով:

**4. Բանավեճի խումբ:** Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է 7 հանդիպում բանավեճի խմբում: Խմբին մասնակել է **6** երեխա/ աղջիկ:
Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 7 հանդիպում բանավեճի խմբում: Խմբին մասնակցել է 6 շահառու, որից 6 աղջիկ: Հանդիպումների ընթացքում կայացել է 1 բանավեճ <<Փողոցային շների հիմնահարցը>> թեմայով: Իրականացվել է նոր թեմայի ընտրություն՝ <<Արդյոք աշակերտները պետք է կրեն դպրոցական համազգեստ, թե ոչ>>: Երեխաները բաժանվել են կողմ և դեմ թիմերի:

Հաջորդ հանդիպումների ընթացքում մասնակիցները հավաքագրել են համապատասխան տեղեկատվություն ըստ ներկայացված թեմայի, կազմվել են մասնակիցների ելույթները: Խմբին մասնակցելով շահառու երեխաները զարգացնում են իրենց հաղորդակցման հմտությունները, իրենց կարծիքները և գաղափարները գրագետ և սահուն արտահայտելու կարողությունը, համացանցից տեղեկատվություն գտնելու հմտությունները և այլն:

5. **Առաջնորդների խումբ:** Առաջնորդների խմբի հիմնական նպատակն էր զարգացնել շահառուների առաջնորդական հմտությունները: Խումբը բաղկացած է **12** մասնակցից, որից **6** աղջիկ, **6** տղա:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է խմբային հանդիպում հետևյալ թեմաներով՝

- մասնագիտական կողմնորոշում
- ապրումակցում

1-ին հանդիպման ընթացքում շահառուներին ներկայացվեց ինչ է նշանակում մասնագիտական կողմնորոշում, ներկայացվեց մարդկային տիպերի, մասնագիտությունների 5 համադրությունները՝

- Մարդ-մարդ
- Մարդ նշանային համակարգ
- Մարդ բնություն
- Մարդ ստեղծագործական կերպար
- Մարդ տեխնիկա

Խմբային աշխատանքի ընթացքում քննարկվեց մասնագիտական մասնագիտության ընտրության հարցում 6 քայլերի կարևորության իմացումը:

<<Ուզում եմ, Կարող եմ, Պետք է>> մեթոդի օգնությամբ երեխաները դուրս բերեցին և վերլուծեցին իրենց անձնային որակները կապը տանելով իրենց ընտրված մասնագիտությանը:

- Կիրառված մեթոդներ՝
- Մարդ գրատախտակ
- <Ուզում եմ >> , <<Կարող եմ>> <<Պետք է>>
- Մասնագիտություն նշված տառով

2-րդ խմբային աշխատանքը ուղղված էր <<Ապրումակցում թեմային>>, որը նպատակ ուներ շահառուների մոտ ձևավորել հմտություններ, որոնք կօգնեն դիմացիան զգացմունքերը, հոգեվիճակը հասկանալուն: Աշխատանքի ընթացքում ներկայացվեց ապրումակցում բառի սահմանումը, քննարկվեց դիմացինին ապրումակցելու 5 քայլերը: Իրականացվեց խաղ-վարժանքներ:

3-րդ խմբային աշխատանքը ուղղված էր համայնքային աշխատանքի իրականացման փուլերին: Հանդիպման ընթացքում շահառու երեխաներին ներկայացվեց համայնքային աշխատանքի իրականացման փուլերը, այնուհետև տեղի ունեցավ նախորդ տարիների իրականացված համայնքային աշխատանքերի տեսանյութերի դիտում և քննարկում: Շահառուների հետ իրականացվեց ընտրված տարածքի քարտեզագրում, ներկայացվեց թե ինչպիսի աշխատանքներ պետք է իրականացվեն համայնքային աշխատանքի ընթացքում:

6. **Ֆիլմախաղ:** Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի երկու սոցիալական աշխատողների կողմից իրականացվել են խմբային աշխատանքեր «Ֆիլմախաղ» խմբի հետ: Խմբում ներառված են **17** շահառու երեխա, որից **8** տղա և **9** աղջիկ:

Հաշվետու ժամանակահատվածում տեղի է ունեցել ընդհանուր 6 հանդիպում:
Հանդիպումների ընթացքում տեղի է ունեցել 2 ֆիլմի դիտում քննարկում, որի արդյունքում կարևորվել է ընտանիքի միասնության, համերաշխության, ծնողների կեղմից տրված խորհուրդների կարևորությունը, նպաստել է առաջնորդական հմտությունների զարգացմանը, նպատակասլացությանը, ինքնուրույն որոշումների կայացմանը: Կազմակերպվել են հետրյալ ֆիլմերի դիտումները՝

- Ձիպն ու Ձապը կապիտանի կղզում
- Ինչպես դառնալ Վիկինգ

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ ժամնցային և ինտելեկտուալ խաղերը՝

- Իջի դուրս խաղանք
- Թվիստ
- Տարբերակ
- Դե խաղա պստո
- Ով եմ ես, ինչ եմ ես
- Սեղանի թենիս

Խաղերը նպաստել են մասնակիցների տրամաբանորեն մտածելու, կրեատիվ մտածելակերպի, երևակայության զարգացմանը, համագործակցային, կազմակերպչական, հարցադրման հմտությունների զարգացմանը, ինքնուրույնության ձևավորմանը, նպաստել են նաև ուրախ ժամանց անցկացնելուն, բարության և հավասարության խրախուսմանը:

**<u>7. Արտթերապիայի</u>** խումբը իրականացվել է կենտրոնի հոգեբանի կողմից: Այն նպաստել է երեխաների հուզական կայունությանը, հասակակիցների հետ շփմանը, ինքնուրույնության, շարժումների (մանր և խոշոր մոտորիկայի) զարգացմանը, վեր է հանվել ուժեղ և թույլ կողմերը և այլն): Խմբին մասնակցել է **15** երեխա, որից **11** տղա, **14** աղջիկ:
Հաշվետու ժամանակահտվածում իրկանացվել է թվով 2 հանդիպում:
1-ին հանդիպման ընթացքում իրականացվել է <<Կաչաղակը և սկյուռիկը>> հեքիաթի ընթերցում, որի միջոցով երեխաները պետք է քաջ գիտակցեին որ կարևորը այն չէ, որ պետք է պարտքը վերադարձնեին այլ պետք է կարևորել ընկերասիրությունը: Իրականացվել է խմբային քննարկում:
2-րդ հանդիպման ընթացքում իրկանացվել է պլաստիրինով ծեփում ազատ թեմայով: Աշխատանքի ավարտին ցուցադրվել է կատարված աշխատանները, որը նպաստել է երեխաների ստեղծագործական մտքի զարգացմանը:

**<u>Լոգոպեդական ծառայություն/ խոսքային խնդիրների հաղթահարմանն ուղղված ծառայություններ</u>**

Հաշվետու ժամանակահատվածում կատարվել են համապատասխան աշխատանքներ նախապատրաստական աշխատանքներ լոգոպեդական աջակցության կարիք ունեցող երեխաների աջակցությունը արդյունավետ կազմակերպելու ուղղությամբ:
Ուսումնասիրվել են երեխաների անամնեստիկ տվյալները, բացահայտվել են խոսքային խանգարումները:
Յուրաքանչյուր երեխայի համար մշակվել է հեռանկարային զարգացնող պլան: Երեխայի կարիքին համապատասխան անցկացվել են անհատական պարապմունքներ, կիրառելով տարբեր մեթոդներ:
Լոգոպեդական աշխատանքի ընթացքում **17 երեխայի /որից 12 տղա, 5 աղջիկ/** հետ աշխատանքի ընթացքում կիրառվել են հետևյալ **3** մեթոդները:

- **Գործնական մեթոդներից** են վարժությունները, խաղերը, հաղորդակցման իրավիճակների մոդելավորումը:
- **Զննական մեթոդներից** են դիդակտիկ նյութերը, դիտումը, ունկնդրումը:
- **Բառային մեթոդներից** են խոսքային նյութերը, պատմվածքները, զրույցը, ընթերցանությունը:

Լոգոպեդի աշխատանքի իրականացման ընթացքում մասնագետի կողմից կազմվել և լրացվել են հետևյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝

- Հաղորդակցման մատրիցա
- Խոսքի հետազոտման քարտ
- Լոգոպեդի առաջնային գնահատման թերթիկ ձևաթուղթ

**<u>Լոգոպեդի կողմից իրականացվող անհատական աշխատանք/խորհրդատվություն երեխաների հետ:</u>**

Համագործակցելով մասնագիտական թիմի հետ կազմվել է աշխատանքային գրաֆիկ: Կատարվել են դիտարկումներ, բացահայտվել են երեխաների մոտ առկա խոսքային խանգարումները և աշխատանքներ են իրականացվել դրանց շտկման ուղղությամբ: Դիտարկումների արդյունքում բացահայտվել է լոգոպեդական միջամտության կարիք ունեցող **17 երեխա /որից 12 տղա, 5 աղջիկ/**, կատարվել է խոսքային հետազոտություն, խնդրի բացահայտում, և ստացել են կարիքին համապատասխան լոգոպեդական աջակցություն, ըստ անհատական պարապմունքների գրաֆիկի:
Լոգոպեդի կողմից իրականացվել է շահառուի առաջնային կարիքի գնահատում և ըստ խոսքի ձևավորման ախտահարման աստիճանի աշխատանք է իրականցվել շահառուների հետ, ովքեր ունեն հետևյալ խնդիրը.

- **2 երեխա (1 տղա, 1 աղջիկ)** ունեն ԽԸԹ-ի I մակարդակ, նրաց մոտ առկա է խոսքային հաղորդակցման միջոցների բացակայություն, կիրառում են հաղորդակցման հարալեզվական ձևեր, արտաբերում են առանձին հնչյուններ, առկա են որոշ թոթովանքային և ճիշտ արտաբերվող բառեր:
- **1 տղա,** երեխա ով ունի ունի ԽԸԹ-ի II մակարդակ, կիրառում է պարզ նախադասություններ, համառոտ խոսք,ակտիվ բառապաշարում գերիշխում են գոյականներ:
- **5 երեխայի (4 տղա, 1 աղջիկ)** հետ, ովքեր ունեն ԽԸԹ-ի III մակարդակ: Երեխաները կիրառում են ընդարձակ նախադասություններ, թույլ են տալիս ձևաբանական և շարահյուսական սխալներ, վերջինիս բառերի վանկային կառուցվածքը խանգարված է կամ խանգարված չէ:
- **5 երեխա (5 տղա)**, ովքեր ունեն ԽԸԹ-ի IV մակարդակ: Երեխաները ունեն ոչ խիստ արտահայտված ԽԸԹ, դժվարանում են կրկնել բարդ վանկային կառուցվածք ունեցող բառերը, ունեն բառափոխության և բառակազմության դժվարություններ, պատմելիս դժվարանում են պահպանել իրադարձությունների տրամաբանական հաջորդականությունը:
- Աշխատանք է իրականացվել **1 երեխայի (աղջիկ)** հետ, ում մոտ ախտորոշվել է սելեկտիվ մուտիզմ, գերզգայունություն՝ ըստ Արաբկիր ԲՀ-ԵԴԱԻ §Արբես¦ ԱԿ-ի կողմից:
- **3 երեխայի մոտ (2 աղջիկ, 1 տղա)** մատ առկա է ՀԹ, ր, ռ հնչյունի շտկում: Հնչյունային թերզարգացում (ՀԹ)-ը առանձին հնչյունների կամ հնչյունախմբերի խանգարում, որը դրսևորվում է հնչյունների արտաբերման աղավաղմամբ կամ բացակայությամբ: Հնչյունային թերզարգացումն անվանում են նաև «կոսմետիկական» թերություն, քանի որ այս դեպքում հնչարտաբերման թերությունները չեն ազդում խոսքային լսողության, բառապաշարի, խոսքի քերականական կառուցվածքի, ընթերցանության և գրի վրա: Հնչյունների կամ հնչյունախմբերի արտաբերման խանգարում է, որը դրսևորվում է հնչյունների արտաբերման աղավաղմամբ կամ բացակայությամբ: Հնչյունների սխալ արտաբերման շտկումն իրականացվել է հետևյալ փուլերով.

- Նախապատրաստական
- Հնչյունի դրում
- Դրված հնչյունի ամրապնդում
- Դրված հնչյունի տարբերակում այլ հնչյուններից

Հնչարտասանության ամրապնդումն իրականացվել է դիդակտիկ խաղերի և վարժությունների միջոցով: Ուսումնասիրվել են երեխաների կարողությունների և հմտությունների զարգացման շարժընթացը:
Շահառուների շրջանում խոսքի բառաքերականական կառուցվածքի շտկում կատարվել է հետևյալ ուղղություններով.
- Բառապաշարի հարստացում
- Քերականական սխալների շտկում
- Կապակցված խոսքի զարգացում/ պատմել նկարը. պարզ սյուժե/
- Կազմել պատմություն՝ ըստ նկարների շարքի
- Վերապատմել տեքստը
- Պատմել ինքնուրույն
- Յուրահատուկ դրսևորումներ խոսքում, էխոլալիայի շտկում
- Խոսքի համապատասխանեցում գործողություններին
- Կարդալու և գրելու հմտությունների զարգացում
- Խոսքի բառաքերականական կառուցվածքը շտկելու նպատակով իրականացվում է հարց ու պատասխան, խաղերի, զրույցի, նկար-քարտերի միջոցով

**<u>Լոգոպեդի կողմից խորհրդատվություն երեխաների ծնողների հետ:</u>** Կենտրոն հաճախող երեխաների ծնողների հետ մասնագիտական թիմը կազմակերպել է պարբերաբար և ըստ անհրաժեշտության հանդիպումներ, ինչպես անհատական, այնպես էլ՝ խմբային ձևաչափերով: Վերահանված խնդիրների համար մշակվել են լուծման ուղիներ, և կազմակերպվել է անհատական աշխատանք աջակցության կարիք ունեցող երեխաների հետ:
Ծնողների հետ հաճախակի հանդիպումների ընթացքում իրականացվել է խորհրդատվական զրույցներ, տրվել է տարաբնույթ ուղղորդումներ և խորհուրդներ կազմակերպվող աշխատանքի արդյունավետության նպատակով: Հաճախակի հանդիպումներ են իրականացվել ծնողի հետ և ներկայացվել է երեխայի զարգացման շարժընթացը և դժվարությունները:
*Լոգոպեդական աշխատանքի արդյունքում նկատելի է դարձել երեխաների հաղորդակցման հմտություններ բարելավվումը,կապակցված խոսքի զարգացումը, շտկվել են մի շարք հնչյուններ/ր,ռ, ս, շ/, զարգացել է գրավոր խոսքը, ստեղծագործաբար պատմվածքի կազմումը՝ պահպանելով տրամաբանական կապն ու հաջորդականությունը:*

**<u>Լոգոպեդի կողմից իրականացված խմբային աշխատանք երեխաների հետ՝ ուղղված խոսքի զարգացմանը:</u>** Կենտրոնի լոգոպեդը աշխատել է **2** խմբի հետ: Խմբերում երեխաների հետ աշխատանք է իրականցվել ուղղված խոսքի ընդհանուր զարգացմանը: Խմբում ներառվել են նաև երեխաներ, ովքեր չունեն լոգոպեդի միջամտության կարիք, այն նպատակով, որ խումբը լինի ներառական և փոխօգնող: Խոսքի զարգացման խմբի հիմնական նպատակն է զարգացնել երեխաների բանավոր և գրավոր խոսքը, բարելավվել երեխաների հաղորդակցման հմտությունները:

**<u>Առաջին խումբը</u>** բաղկացած է եղել **10** երեխայից, որից **7** տղա, **3** աղջիկ: Խմբի հետ իրականացվել է **15** խմբային հանդիպումներ հետրյալ թեմաներով՝
- Ծանոթացում

- Խմբային կանոնների որոշում
- Բանավոր խոսքի զարգացում
- Գրավոր խոսքի զատգացում
- Բառապաշարի հարստացում հարստացման շրջանակներում բառի նպատակային կիրառման կարողության զարգացմանը, բառի փոխաբերական իմաստի, բառի բազմիմաստության ընկալման ձևավորմանը:
- ԽԸԹ-ի այս մակարդակում աշխատանք է տարվում կապակցված խոսքի զարգացման
- Երկխոսության խթանում
- Սյուժետային նկարով պատմվածքի կազմում
- Սայուժետային նկարների շարքի պատմում
- Տեքստի վերապատմում
- Ստեղծագործաբար պատմվածքի կազմում

ԽԸԹ-ի այս մակարդակում աշխատանք է տարվե կապակցված խոսքի զարգացմանը ուղղված հետևյալ կերպ.
- Երկխոսության խթանում
- Սյուժետային նկարով պատմվածքի կազմում
- Սայուժետային նկարների շարքի պատմում
- Տեքստի վերապատմում
- Ստեղծագործաբար պատմվածքի կազմում

Խմբային աշխատանքների արդյունքում նկատելի է դարձել երեխաների հաղորդակցման հմտություններ բարլավվումը, կապակցված խոսքի զարգացումը, գրավոր խոսքի զարգացումը, ստեղծագործաբար պատմվածքի կազմումը:

**<u>Երկրորդ խումբը</u>** բաղկացած է եղել **10** երեխայից, որից **7 տղա, 3 աղջիկ**: Խոսքի զարգացման խմբի հիմնական նպատակն է զարգացնել երեխաների բանավոր և գրավոր խոսքը, բարելավվել երեխաների հաղորդակցման հմտությունները: Իրականացվել է **13** խմբային հանդիպումներ հետրյալ թեմաներով՝

- Գրավոր խոսքի զատգացում
- Բառապաշարի հարստացում հարստացման շրջանակներում բառի նպատակային կիրառման կարողության զարգացմանը, բառի փոխաբերական իմաստի, բառի բազմիմաստության ընկալման ձևավորմանը:
- ԽԸԹ-ի այս մակարդակում աշխատանք է տարվում կապակցված խոսքի զարգացման
- Երկխոսության խթանում
- Սյուժետային նկարով պատմվածքի կազմում
- Սայուժետային նկարների շարքի պատմում
- Տեքստի վերապատմում
- Ստեղծագործաբար պատմվածքի կազմում

Խմբային աշխատանքների արդյունքում նկատելի է դարձել երեխաների հաղորդակցման հմտություններ բարելավվումը, կապակցված խոսքի զարգացումը:

**<u>Խմբավարի ծառայություն:</u>** Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են **3** խմբակներ: **Պարի խումբ:** Հաշվետու ժամանակահատվածում պարի խմբին մասնակցել է **14** երեխա, որից **11** աղջիկ: Դասընթացները տեղի են ունենում պարային ստուդիայում՝ շաբաթական երկու օր հաճախականությամբ: Յուրաքանչյուր դասընթաց սկսվել է նախավարժանքով, մարմնի